

# ՄÀÔԹ²ÎÚ

## 24 ² ä Æ 1915

Աշխարհի վրայ պետութիւնները, որոնք ներկայիս թիւով 196 են, իրենց բազմատեսակ ազգային, կրօնական տօներու կարգին, ոնին նաեւ օր մը, որ իր բնոյթով եւ զգայնութեամբ իւրայատուկ է եւ տարբեր միւս տօնական օրերէն: Այդ պատճառով ալ ան կը նշուի ոչ թէ իբր տօն, այլ՝ ինչպէս մեր մօտ՝ Յուշատօն:

Միացեալ Նահանգներու մէջ օրինակ, կայ Christmas-ը, New Year-ը, Columbus Day-ը, 4<sup>th</sup> of July-ը, Labor Day-ը, Mother's Day-ը եւայլն: Տարբեր օրէն են սակայն՝, Martin Luther King Day-ը, Memorial Day-ը, եւալն:

Հայ կեանքի մէջ կան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, Անկախութեան եւ Վերանկախութեան թուականները. կայ նաեւ Վարդանանքը եւ բոլորովին տարբեր՝ Յուշատօն Ապրիլ 24ը:

Բոլոր ժողովուրդներուն ալ մօտ, տօներուն մէկ մասը՝ հոգեւոր, ուրախութեան, ցնծութեան առիթներ են, իսկ միւս մասը՝ պարտադրուած այլոց կողմէ, կամ՝ գոյացած արիւնով ու նահատակութիւններով:

Այդ կապակցութեամբ, Ապրիլ 24ի Յուշատօնը եզակի օրինակ է եւ ոչ միայն հայութեան, այլեւ ընդհանուր ազգերու պատմութեան մէջ:

Պատմական հակիրճ ակնարկ մը կրնայ որոշ գաղափար մը տալ այն մասին, թէ ինչո՞ւ այնքան զգայուն եւ եզակի թուական կը նկատուի ան:

### ԹՐՔԱԿԱՆ ՑԵՂԵՐՈՒՄ ԶԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ

11րդ դարէն սկսեալ Միջին Ասիայէն դեպի Մերձաւոր Արեւելք կը յայտնուի արշաւող բիրտ ու վայրագ հզօր ուժ մը, զինուորապէս լաւ կազմակերպուած սելճուք-թուրք ցեղախումբեր, որոնք կը գրաւեն եւ իրենց կ'ենթարկեն ընդարձակ տարածքներ եւ փոքր ու մեծ պետութիւններ:

Պատմական Հայաստանը կ'ըլլայ առաջիններէն, որ կ'իյնայ այս ներխուժողներու տիրապետութեան տակ:

1453 թուին, անոնք կը նուաճեն Նոյնիսկ Բիւզանդիոնի կայսրութիւնը: Կը գրաւեն Կ. Պոլիսը, ինչ որ ընդհանուր ազգաց պատմութեան մէջ դեպքը կը նկատուի սկիզբ՝ աշխարհի Նորագոյն պատմութեան:

15րդ եւ 16րդ դարերը թրքական ցեղախումբերուն համար կը դառնան ամենէն զօրաւոր եւ փայլուն դարերը: Յաղթանակող մեծ ուժը կ'անուանուի Օսմանեան Կայսրութիւն՝ առաջնորդող տոհմին Օսման անունով առաջին սուլթանին անունով (1258-1324/26):

Անոնք կը տիրապետեն ոչ միայն Միջին Արեւելքին, այլեւ՝ հետզհետէ Ափրիկէի, Եւրոպական ցամաքամասէն ընդարձակ տարածքներու եւ ազգութիւններու:

17րդ դարէն սկսեալ սակայն, կայսրութիւնը որոշ չափով կը սկսի կորսնցնել իր հզօրութիւնը: Նուաճուած երկիրներ յարաճուն պայքարներով կը վերատիրանան իրենց անկախութիւններուն:

17րդ 18րդ դարերուն ուժեղ կերպով իրարու դէմ կը պայքարին օսմանցիներ, պարսիկներ եւ ռուսեր, որոնք իրարմէ կը խլեն տարածաշրջանները:

19րդ դարու երկրորդ կիսուն՝ 1878-ին, օսմանցիներ շեշտակի պարտութիւն կը կրեն ռուս-թուրք պատերազմի մը մէջ, որուն հետեւանքով յոյսեր կը տածուին, որ հայ ժողովուրդը եւս ազատագրուի այլոց նման, ինչպէս՝ յոյները, պուլկարները, ռումանացիները, որոնք ժամանակ առ ժամանակ ազատագրուած էին բիրտ տիրապետութենէն:

Յիշեալ պատերազմին առիթով տեղի կ'ունենան հաշտութեան երկու խորհրդածողովներ.

- Սան Ստեֆանոյի ժողով, եւ

- Պերլինի Վեհաժողով:

Երկու ժողովներուն ալ մէջ, հայ ժողովուրդի տխուր իրավիճակը բարելաւելու համար, կ'առնուին դրական որոշումներ: Սակայն, գործնական գետնի վրայ ոչ մէկ փոփոխութիւն կը նկատուի: Օսմանեան պետութիւնը շատ ճարպիկ ձեւով կը ձգձգէ որոշումներու գործադրութիւնը, իսկ Եւրոպական պետութիւններէն իւրաքանչիւրը՝ տարուած իր երկրի յատուկ շահերէն, կը խուսափի խնդիր ունենալէ Օսմանեան պետութեան հետ:

Ստեղծուած կացութեան մէջ, Օսմանեան կայսրութիւնը առիթէն օգտուելով, ինք կը ծրագրէ, որ իւրայատուկ ձեւով մը ձերբագատուի Զայկական Զարցեն:

Կը սաստկացնէ գաւառներուն մէջ անիրաւութիւնները. ամենուրեք՝ բռնութիւն, անպատուութիւն, սպանութիւն: Կը ստեղծուի հակաքրիստոնէական, հակահայկական ծանր մթնոլորտ:

1894-95-96 թուականներուն հայկական բոլոր գաւառներուն մէջ կը կազմակերպէ կոտորածներ: Շուրջ 300 հազար անմեղ բնակիչներ զոհ կ'երթան: Մեծ թիւով գաւառացիներ փախուստ կու տան երկրէն: Եւրոպացիներ կը փորձեն միջամտել, բայց՝ ամեն ինչ կը մնայ ձեւական:

Օսմանեան պետութիւնը համոզելու համար Եւրոպացիները, թէ քրիստոնէաներուն եւ հայերուն նկատմամբ հիմնովին կը փոխէ իր վերաբերումը, 1908ին կը յայտարարէ Սահմանադրութիւն, բոլոր քաղաքացիներուն շնորհելով իրարհաւասար իրաւունքներ:

Աշխարհի ամբողջ կը շնորհաւորէ Օսմանեան պետութիւնը:

Կը ստեղծուի դրական եւ յուսադրիչ մթնոլորտ: Մարդիկ կը սկսին հաւատալ, որ միապետական, անօրէն եւ բիրտ վարչակարգը վերջ գտած է այլեւս:

Զայ ժողովուրդի մտաւորական եւ քաղաքական տարրեր, որոնք Եւրոպա ապաստանած էին, կը վերադառնան Պոլիս: Բոլորը կը տածեն այն համոզումը, որ հռչակուած Սահմանադրութեամբ՝ ազատութիւն է այլեւս եւ կրնան գրել, խօսիլ, ազատ գործել:

Կեանքը եւ փորձառութիւնը սակայն, ցոյց կու տան, որ թէ՛ Եւրոպացիները, թէ՛ հայերը սխալած էին: Յայտնի պիտի ըլլար, որ Օսմանեան պետութիւնը Սահմանադրութիւնը հռչակած էր թուղթի վրայ միայն, եւ ինք՝ կը մնար հետամուտ իր հին քաղաքականութեան, որուն գլխաւոր նպատակն էր երկիրը ազատել քրիստոնէա »անհաւատներէն« ու անոնց մէջ մեծամասնութիւն կազմող՝ հայ տարրէն:

Այստեղ միջանկեալ յայտնենք, որ այդ շրջանին հայութեան թիւը գնահատուած է շուրջ երկուքուկէ միլիոն:

Սահմանադրութեամբ հռչակուած ազատութիւնն ու իրարհաւասարութիւնը անուանական ըլլալու շօշափելի եւ անմիջական վկայութիւն էր օրինակ հետեւեալը.-

Զազիւ քանի մը ամիս անց, 1909ի Ապրիլ 1ին, Օսմանեան պետութեան կողմէ շարունակուող ոճրային հին քաղաքականութեան բացորոշ, այլեւ ցնցիչ փաստ կը տրուի, երբ քանի մը օրուան ընթացքին, ամբոխները աւելի քան 30 հազար հայ կը ջարդեն Ատանայի եւ Կիլիկիոյ այլ քաղաքներուն մէջ:

Անգամ մը եւս աշխարհ կը ցնցուի. Եւրոպան դարձեալ կը փորձէ միջամտել: Ի վերջոյ, 1913-1914ին, Պերլինի վեհաժողովէն 35-36 տարիներ ետք, Եւրոպացի երկու բարձրաստիճան պաշտօնատարներ կու գան միջոցառում կատարելու հայկական նահանգներու բարեկարգութեան համար:

Օսմանեան կառավարութիւնը կու տայ իր հաւանութիւնը: Բայց նոյն ժամանակամիջոցին, նկատի ունենալով, որ Եւրոպայի մէջ ծանր դեպքեր պատահած էին եւ համաշխարհային պատերազմ կը յայտարարուէր, կը թելադրուի Եւրոպացի բարձրաստիճան պաշտօնատարներուն, որ վերադառնան տուն եւ սպասեն աւելի խաղաղ եւ յարմար ժամանակի մը, գործը շարունակելու համար:

Եւրոպացի պաշտօնատարները անշուշտ կ'ընդհատեն իրենց աշխատանքը:

Մինչ այդ, Օսմանեան պետութիւնը օգտուելով ստեղծուած մթնոլորտէն, երբ Եւրոպական գրեթէ բոլոր պետութիւնները զբաղած էին իրենց դժուարութիւններով, կ'որոշէ առանձնապէս եւ ներքնապէս լուծել Զայկական Զարցը:

Նախ՝ յատուկ ծրագրով կը յայտարարէ ընդհանուր զինուորագրութիւն՝ 18էն 40 տարեկան քաղաքացիներու, իբրեւ անհրաժեշտութիւն՝ երկրի պաշտպանութեան համար:

Ծառայութեան կ'երթան, ի միջի այլոց, աւելի քան 50 հազար հայ երիտասարդ տարրեր:

Յաջորդ տարին, 1915ի Ապրիլին, առանց բացատրության, առանց որեւէ ամբաստանության, յանկարծակի ձեւով մէկ գիշերուան մէջ հազարաւոր ոստիկաններ գործի լծուած՝ տունէ տուն մտնելով կը ձերբակալեն եւ ոստիկանատուն կ'առաջնորդեն տասնեակ հարիւրներով մտաւորականներ, խմբագիրներ, գրողներ, ազգային գործիչներ, կրօնականներ, գործարարներ, մասնագէտներ եւ հանրային կեանքի մէջ վարկ վայելող անձնաւորութիւններ:

Բոլոր ձերբակալութիւնները կ'ըլլան միանգամայն: Առիթ չի տրուիր, որ նոյնիսկ իրենց գիշերային հագուստները փոխեն:

Ամբողջ երկրին մէջ կը ստեղծուի սարսափի մթնոլորտ:

Բոլոր ձերբակալուածները քանի մը օրէն կ'անհետացուին:

Ազգականներու, նոյնիսկ բարձրաստիճան օտար պաշտօնատարներու կողմէ միջամտութիւնները՝ կը հանդիպին կտրուկ մերժումի:

Շուտով յայտնի կ'ըլլայ, որ հայ ղեկավարներ ոչ միայն Պոլսոյ, այլեւ նոյն ատեն երկրորդական այլ քաղաքներու եւ հայկական գաւառներու շրջաններուն մէջ եւս կը ձերբակալուին եւ կ'ենթարկուին նոյն ճակատագրին:

\*

\* \*

Ամենուրեք հայ ժողովուրդի ընտրանին, մտաւոր տարրը չէզոքանելը՝ բացայայտ է՝ կը նշանակէր ժողովուրդը գրկել ղեկավարութենէն, կամ՝ պարզապէս գլխատել գայն:

Չինակուցի ենթարկուած երիտասարդութիւնը անմիջապէս կը ղրկուի սահման, պաշտպանության խրամներ փորելու:

50 հազարէ աւելի հայ զինուորներու փորած խրամները կը դառնան անոնց գերեզմանները:

Պատերազմէն ետք, ոչ մէկ հայ զինուոր ողջ կը մնայ: Վերապրող կամ բախտով փախուստ տուած սակաւաթիւ զինուորներ վկայած են իրենց ընկերներուն վերապահուած դժբախտ ճակատագրի մասին...

## ՉԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Չինուորագրեալ տարրերու եւ մտաւոր ու ղեկավար դասակարգի չէզոքացումէն ետք, անմիջապէս կը սկսի միլիոնաւոր հայ գիւղացիներու ստիպողական եւ անմիջական տեղահանութիւնը:

Կը սկսի մեծ գողգոթան, մեծ տագնապը:

Ժողովուրդը կ'ենթարկուի անհուն տառապանքներու:

Բռնութիւն, անիրաւութիւն, հիւանդութիւն...:

Գաղթականներու մեծ տոկոս մը անմիջապէս կը կոտորուի առաջնորդող ոճրագործ պահակներու կողմէ:

Մաս մը՝ հիւանդ եւ անկարող տանելու նման չարչարանքներն ու զրկանքը, կը մահանայ ճամբաներու երկայնքին: Փոքրամասնութիւն մը դիմացողներու՝ մտրակներու հարուածներու տակ, կը քալէ մահուան անորոշ ճամբաներէն:

## ՊԱՐՏԱԴՐՈՒԱԾ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՅԹՆԵՐ

Ստեղծուած կացութեան մէջ, հայկական կարգ մը շրջաններու ու քաղաքներու մէջ, ուր ժողովուրդը չ'ուզէր գաղթական դառնալ, կը դիմէ պարտադրուած ըմբոստության:

Ժողովուրդը կը փորձէ իր ունեցած միջոցներով դիմադրել: Տեղի կ'ունենան երկար ու կարճ ժամկետով անհաւասար կռիւներ:

Կարգ մը շրջաններ եւ քաղաքներ կը կերտեն ճակատումներու պատուաբեր էջեր. պատմական դրուագներ՝ որոնք ծանօթ են ՅԵՐՈՍՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ որակումով:

- Վանի, Վասպուրականի հերոսամարտ,
- Շապին Գարահիսարի հերոսամարտ,
- Տարօնի հերոսամարտ,
- Մուսա Լեռան հերոսամարտ,

- Ուրֆայի հերոսամարտ:

Հաստատենք սակայն, որ անոնք բոլորն ալ, թէւ որոշ առաւելութիւններ կ'արձանագրեն, բայց՝ ի վերջոյ պետական անհամեմատ ուժերու դէմ տեղի կու տան:

## ԺՈՂՈՎՈՐԴԻ ՄԸ ԱՆՅԵՏԱՑՈՒՄԸ

Օսմանեան թուրք ոճրային անսկարագրելի միջոցառումներուն հետեւանքով, յիշեալ կարճ ժամանակամիջոցին մէջ, պատմական Հայաստանի շուրջ երկուքուկէս միլիոն հայութիւնը կը բռնադատուի բաժնուիլ հազարաւոր տարիներու իր տուն-հայրենիքէն:

Մեծ մասը՝ ՄԵԿՈՒԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ, ոճրագործներու ձեռքով ուղղակի կը կոտորուի:

Մաս մը, իր շրջապատին մէջ փախստական՝ կրօնափոխ եւ հարկադրուած բռնի ամուսնութիւններու, կը դառնայ կեանք եւ կարեկցութիւն աղերսող ստորադաս քաղաքացի:

Մաս մըն ալ՝ անսկարագրելի աղքատութեան ու թշուառութեան վիճակով, գրեթէ մահամերձ, կը հասնի օտար, անծանօթ տարածքներ:

Աներեւակայելի է իրականութիւնը:

Բայց իրողութիւնը այն է, որ Օսմանեան թուրք պետութիւնը Առաջին Համաշխարհային պատերազմի առաջին տարիներուն գործած եղաւ հայ ժողովուրդին վրայ ի գործ դրուած ոճրային Առաջին Տեղասպանութիւնը:

Հայութիւնը ոչ միայն ցեղասպանական անեացումին ենթարկուեցաւ, այլեւ կորսնցուց հազարաւոր տարիներու հող-հայրենին՝ հոն ստեղծուած մշակոյթով, ամանդութիւններով եւ բոլոր տեսակի հարստութիւններով:

Մեկուկէս միլիոնի արիւնալի եւ անխիղճ սպանդէն անկախ, կրօնափոխ դարձած նկատառելի հատուածը եւս, քանի մը սերունդ տեք՝ այսօր, ամէն կապ ականայ կտրած իր արմատներուն, հայ լեզուին, մշակոյթին ու հայրենիքին հետ, հազիւ թէ կը յիշէ որ իր նախնիները եղած են հայեր...:

Հաստատենք, որ 20րդ դարու ընթացքին կը կատարուին եւ կատարուեցան Տեղասպանական այլ ոճիրներ եւս, բայց, հայ ժողովուրդի դէմ գործուածը կը մնայ տարբեր միւսներէն:

ՄԷԿ օրինակ միայն.

Հրեայ ժողովուրդը Համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին ենթարկուեցաւ ցեղասպանական անմարդկային ոճիրներու: Տուաւ հայութենէն չորս անգամ անելի մեծ թիւով զոհ, բայց միլիոններու այդ ոճիրը կատարուեցաւ իր երկրէն հեռու՝ գերմանական եւ եւրոպական տարածքներու վրայ: Հրեայ ժողովուրդի հայրենի հողը՝ մնաց հեռու ոճիրի դաշտէն: Այդ պայմաններուն մէջ ժողովուրդը անգամ մը եւս յաջողեցաւ վերականգնել իր հայրենիքը:

## ԿԵԱՆՔԸ՝ ՍՈՍԿԱԼԻ ԵՂԵՌՆԵՆ ԵՏՔ

### ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

Անսկարագրելի դժբախտութիւններով վերապրող մնացորդացը, Եղեռնէն ետք հետզհետէ սկսաւ կազմակերպուիլ:

Յաջորդական սերունդներ մինչեւ 50 տարի, ճիգ ըրին համախմբուելու եւ աշխարհի դատաստանին յանձնելու Թուրքիոյ կողմէ հայութեան դէմ կատարուած մեծ ոճիրը:

Չանազան երկիրներու հայաշատ քաղաքներուն մէջ, հաւաքական միջոցներով բարձրացուեցան կոթողներ, որոնք աշխարհի ժողովուրդներուն կը յուշեն ցեղասպանական մեծ ոճիրը:

- Մայրաքաղաք Երեւանի մէջ՝ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը իր անմար կրակով եւ պետական պաշտօնական հանգամանքով ամենէն փառաշուքն է անշուշտ, ուր

իրենց յարգանքը կը մատուցեն Հայաստան այցելութիւն տուող օտար պաշտօնական անձնաւորութիւններ:

- Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայր Տաճարի կողքին՝ Եղեռնի յատուկ մատուռը՝ Ս. Ստեփանոս,
- Միացեալ Նահանգներու Մոնթեպելլօ քաղաքի յուշակոթողը,
- Լեռնալիբանանի մէջ ՎՆ Պիքֆայա - Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համալիրին կից յուշակոթողը,
- Սուրիոյ Տեր-Չօր քաղաքին մէջ Նահատակաց յուշահամալիրը,
- Միացեալ Նահանգներու Սան Ֆրանսիսքօ քաղաքին յուշակոթողը,
- Ֆրանսայի, Հարաւային Ամերիկայի զանազան քաղաքներուն մէջ բարձրացած յուշակոթողները,
- Բազմաթիւ եկեղեցիներու կողքին, զետեղուած մեծադիր խաչքարերը, եւայլն:

Բոլորը՝ յիշեցնելու համար աշխարհի ժողովուրդներուն, հայութեան դէմ գործուած պատմութեան մեծագոյն ոճիրը:

## ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

Չբաւարարուելով յուշակոթողներու իրագործումով, որոնք բարոյական եւ հոգեկան երեւոյթներ են, հայ ժողովուրդի մէջ հետզհետէ կազմակերպուած քաղաքական գործունեութիւնները տարուէ տարի արձանագրեցին նուաճումներ, որոնք ունին նկատառելի արժէք հայ ժողովուրդէն խլուած իրաւունքները ճանչնալու եւ վերականգնելու տեսակետէն:

Բազմաթիւ երկիրներ արդէն պաշտօնապէս դատապարտած են Թուրքիոյ կողմէ հայութեան դէմ կատարուած ցեղասպանութիւնը:

Պաշտօնապէս ճանչցած երկիրներն են.-

1.- Ուրուկուէյ	1965
2.- Կիպրոս	1982
3.- Եւրոխորհրդարան	1987
4.- Ռուսիա	1995
5.- Յունաստան	1996
6.- Աւստրալիա	1997
7.- Ֆրանսա	1998
8.- Պելճիքա	1998
10.- Իտալիա	2000
11.- Լիբանան	2000
12.- Շուէտ	2000
13.- Վատիկան	2000
14.- Չուիցերիա	2003
15.- Սլովաքիա	2004
16.- Արժանթին	2004
17.- Վենեզուելա	2005
18.- Գերմանիա	2005
19.- Հոլանտա	
20.- Լիթւանիա	
21.- Լեհաստան	
22.- Փորթուկալ	
23.- Սպանիա	
24.- Նորվեկիա	

Միացեալ Նահանգներու մէջ, 39 նահանգներ՝ 50ի վրայ, ընդունած են արդէն կատարուած ցեղասպանութեան իրողութիւնը: Յոյս կայ, որ նաեւ կառավարութիւնը ի վերջոյ ընդունի գործուած ոճիրը՝ իբրեւ Ցեղասպանութիւն:

## ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Չաստատեցինք, որ Եղեմնէն վերապրող Սփիւռքի հայութիւնը տասնեակ տարիներէ ի վեր անշեղ կը պայքարի, հիմնականօրէն հետեւեալ մարզերուն մէջ.

- Պահպանել հայ ինքնութիւնը, հայ լեզուն, հայ մշակոյթը:

- Պայքարիլ՝ մարդկութեան եւ հայութեան այն թշնամիներուն դէմ, որոնք մինչեւ այսօր ոչ միայն անպատիժ մնացած են, այլեւ կը շարունակեն ուրանալ իրենց կատարած անմարդկային ոճիրները:

- Պայքարիլ՝ որ ոճրագործը հողային եւ սիւթական հատուցում կատարէ

Յեղասպանութեան ժառանգորդ հայութեան, որպէսզի վերականգնի անոր պատմական եւ մարդկային իրաւունքները:

Յեղասպանութեան եւ սարսափի օրերէն բախտով կամ պատահականութեամբ վերապրողներու նորագոյն սերունդը՝ ուսանողներ, ներկայիս նիւթապէս, ֆիզիքապէս եւ ուսումնապէս որոշ չափով կազդուրուած, Ապրիլ 24ի Յուշատօնը պիտի նկատեն ոչ միայն միլիոններու առջեւ խոնարհելու, աղօթելու կամ յարգանքի առիթ, այլ Ուխտի Օր՝ անգամ մը եւս վերանորոգելու ընկերային քաղաքական հաւաքական պայքարը՝ յօգուտ հայ ազգային դատին, այն վճռական հաւատքով եւ տրամադրութիւններով, որ պիտի վերականգնին նահատակ ժողովուրդի հողային եւ սիւթական յափշտակուած իրաւունքները:

Ապրիլ 24ը՝ հայ ժողովուրդին, բայց մանաւանդ ուսանողներուն համար, պէտք է նկատել Վնլռելի Չանգ մը, որ տարուան բոլոր օրերուն ամէնքը պատրաստ պիտի պահէ հայ ժողովուրդի դատին եւ սրբազան պայքարին համար:

# Ղողանջ Եղեռնական

## ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Խանգարե՞լ: Ինչի՞ համար...  
Գարուն էր: Չեկաւ ամառ՝  
Փուլ եկաւ երկնականար,  
Ձիւն մաղեց մեր բաց գլխին,  
Ձիւն մաղեց՝ կրակի պէս...  
- Գարուն ա, ձուն ա արել...  
Գետերը մեր երերման  
Հոսեցին՝ կրակի պէս...  
- Արունը ջուր ա դառել...  
Ձորերը շիրիմ դարձան,  
Վիհերը՝ գերեզմանոց.  
- Ջուրը մեր տունն ա տարել...  
Ամէն քար՝ լուռ մահարձան,  
Ամէն տուն՝ վառման հնոց,  
- Բնաւեր հաւք ենք դառել...  
Ինչքան բառ՝ ո՛րջը մրմունջ:  
Ինչքան երգ՝ ո՛րջը լալով.  
- Չուլում էր, զուլում, լաօ՛...  
Թրի դէմ, սրի, հրի՝  
Լոկ մանգաղ, լոկ բահ ու մաճ.  
- Տնաւե՛ր-բնաւե՛ր լաճ...  
Մեր հողը, մեր հայրենին,  
Մեր երկիրն ամայացաւ,  
- Սե՛ւ կապիր, սեւ սիրտ մարէ...  
Հինաւուրց տոհմիկ մի ազգ  
Չմեռաւ, այլ...մահացա՛ւ.  
- Գարուն ա, ձուն ա արել... \*

- Գարուն ա, ձուն ա արել...

...հոցեցին ու ջնջեցին,  
Հատեցին հաստ ու բարակ,  
Յօշեցին ու տանջեցին,  
Փշրեցին, տուին կրակ,  
Վաթեցին արիւն-արցունք,  
Ներկեցին ձոր ու բարձունք,  
Քանդեցին երկինք մի լուրթ,  
Մորթեցին մի ժողովուրդ,  
Հացառատ մի ողջ աշխարհ  
Սարքեցին փշրանք-նշխար,  
Սո՛ւրբ նշխար՝ շա՛ն բերանում,-

Ուզեցին մէկ հայ թողնել,  
Եւ այն էլ...թանգարանում...  
- Գարուն ա, ձուն ա արել...

(Հատուած մը «Անլռելի Չանգակատուն» գիրքէն)

# Յայրենիքիս

## ՅՈՎՅԱՆՆԵՍ ԾԻՐԱԶ

Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մէջ ես,  
Դու սրտիս մէջ ես, ոչ լեզուիս վրայ,  
Իմ սրտի միջից՝ թէ սիրտս ճեղքես՝  
Դրօշիդ բոցը պիտի հուրհուրայ:

Չեմ ուզում գոռալ չորս հազարամեայ իմ սիրոյ մասին,  
Բայց դու իմացիր, որ լացող աչքս երբեք չգոցուեց,  
Մեզ հարիւր տեղով խոցեց ոսոխը, ինչպէս Յիսուսին,  
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցուեց:

Ես ամբողջովին, քո Վարդանի պէս, քոնս եմ հայրենիք,  
Ես մոմ կը դառնամ՝ քո գլխին գալիք գիշերում դժնեայ՝  
Քո փառքի համար թէ մոմս հալուի՝ մեռնեմ էլ լռիկ՝  
Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնայ:

Իմ արեան ձեթով այրուող կանթեղ եմ՝ մթնում՝ քո յոյսին,  
Կրծում եմ սիրտս՝ թէ ինչո՞ւ ազգ իմ, չկայի այն ժամ,  
Երբ ժանտ եղեռնը արեւդ դարձրեց արնաքամ լուսին,  
Ինչո՞ւ չէի թուրդ ամենադաժան...:

Ինձնից յետոյ էլ՝ կ'ուզէի իմ կուռք, սատարել ես քեզ՝  
Իմ շիրմաքարն էլ քեզ սանդուղքի քար դարձրու, հայրենիք,  
Միայն թէ դու դեռ այնպէս բարձրանաս, խոյանաս, այնպէս,  
Որ Մասիսներդ էլ դարձնես երջանիկ:

## Ափ Մը Հող Բերէ՛ք...

ՇԱՀՆԱԶԱՐ ԲԷՕԹԱՀԵԱՆ

Ափ մը հող բերէք

Մայր Հայաստանի մեր սուրբ լեռներէն,  
Ափ մը հող, օծուն՝ հայու արեւով,  
Ափ մը հող՝ թրջուած հայու արցունքով,  
Մարտիրոսներու, նահատակներու  
Առուակ առ առուակ հոսած արիւնով...:

Ափ մը հող բերէք

Մայր Հայաստանի բերրի արտերէն,  
Ուր ցորեանն ոսկի, խաղողն քաղցրահամ,  
Կեանքին կեանք կու տան,  
Հոգւոյն՝ նոր հոգի,  
Կը դառնան պարգեւ, կազդոյր՝ յարածամ...

Ափ մը հող բերէք

Մայր հայրենիքի ծաղկուն դաշտերէն,  
Ափ մը հող՝ փխրուն,  
Խա կարօտաբաղձ, սա կարօտակէտ  
Հայոց սրտերու բիւր-բիւր ցաւերուն  
Իբրեւ հրաշք բոյժ, իբրեւ բալասան...:

Ափ մը հող բերէք

Մեր նուիրական, մեր պապենական հայու հողերէն,  
Օտար հողերուն նետուած մնացած  
Սա պանդուխտներուն...  
Ափ մը հող բերէք, օտար աստղերու  
Տմոյն լոյսին տակ, օրէ օր հիւծող  
Հայու ծնունդով, հայ հոգիներուն...:

Ափ մը հող բերէք...: